

այս Բաղրատունիք էին, ծաղկեցաւ պետութիւնը, մանաւանդ ԺԲ. դարուն: Բայց տիրող աւատական դրութիւնը, ներքին երկպառակութիւնք, կրօնական վէճեր եւ հալածանք իսկ մանաւանդ Հայոց հանդէպ, ԺԳ. դարուն պառակտեցին այս բաւական մեծցած պետութիւնը: Սարգիս (1269ին) հիմ դրաւ Սամցխէի իշխանութեան, որուն կենդրոնն եղաւ Ախալցխա. եւ այս իշխանք՝ «Աթաբեկ», յորջորջուած, տիրեցին նաեւ Տայոց գոնէ մէկ մասին: Տայք ուրեմն բաւական երկար ժամանակ վրահայ իշխանութեան ենթարկուած են. եւ բնական է թէ հայ իշխանական տանց յընթացս դարուց փոխանակեցին յաճախ վրականք, վրածէս եկեղեցին աւելի տարածուեցաւ եւն: Բայց բուն վրական (մեսիս եւն) ժողովուրդ հազիւ թէ՛ նաեւ դոյզն չափով մուտք գտած ըլլայ ի Տայս: Ամբողջ աշխարհին մէջ չի գտնուիր գիւղի մ'անուն՝ որ իրօք վրական ըլլայ, ամէնքը հայկական են մինչեւ այսօր:

Իրերն այս դրութեան մէջ էին երբ Թուրքերը Պարսից դէմ, որոնց գերիշխանութեան ներքեւ էին ինչպէս Տփղիս, նոյնպէս Ախալցխա, պատերազմելով տիրեցին Թորթումի 1549ի. եւ Չըաբըրի ճակատա-